

Արձանագրություն թիվ 9

ԵՊՀ-ի Քիմիայի ֆակուլտետի գիտական խորհրդի նիստի,

կայացած 2022թ հունիսի 29-ին

Օրակարգում`

1. Ավարտական աշխատանքների պաշտպանությունների արդյունքների քննարկում:
2. Անօրգանական և անալիտիկ քիմիայի ամբիոնի վարիչի հաշվետվությունը 2021-22 ուս. տարում կատարած աշխատանքների վերաբերյալ:
3. Հետազոտական բաղադրիչ ունեցող առարկաների աշխատանքների պաշտպանությունների արդյունքների քննարկում:
4. «Դասախոսը ուսանողի աչքերով» սոցիոլոգիական հարցումների արդյունքների քննարկում:
5. Ուսումնական ծանրաբեռնվածությունների հաստատում:
6. Ընթացիկ հարցեր:

Նիստի նախագահ, պրոֆեսոր Տ.Վ.Ղոչիկյան –Գիտխորհրդի 16 անդամներից ներկա են 15-ը: Այսօրվա նիստի օրակարգին բոլորդ ծանոթ եք և եթե փոփոխություններ չկան` անցնենք օրակարգի 1-ին հարցին: Ամբիոնի վարիչները ներկայացնեն ավարտական աշխատանքների արդյունքները:

Ֆիզիկական և կոլոիդ քիմիայի ամբիոնի վարիչ Շ.Ա.Մարգարյան- Մեր ամբիոնից ներկայացված ավարտական աշխատանքները և մագիստրոսական թեզերը պաշտպանվել են բարձր մակարդակով և ուսանողները արժանացել են բարձր և գերազանց գնահատականների: Բակալավրիատից երկու ուսանող դիմել են մագիստրատուրա:

Օրգանական քիմիայի ամբիոնի վարիչ Ն.Ա.Դուրգարյան – Մեր ամբիոնից ներկայացվող ավարտական աշխատանքները և մագիստրոսական թեզերը պաշտպանվել են հաջողությամբ և ուսանողները արժանացել են բարձր

գնահատականների: Միայն 2 հատ 10 միավոր ունենք ֆարմացիայի ինստիտուտի հեռական բաժնի ավարտական աշխատանքներից:

Անալիտիկ և անօրգանական քիմիայի ամբիոնի վարիչ Ա.Ի.Մարտիրյան- մեր ամբիոնում էլ է պաշտպանության հարցը նորմալ, արտակարգ դեպքեր չեն գրանցվել:

Տ.Վ.Ղուչիկյան - Ուզում եմ հիշեցնել, որ ավարտական աշխատանքները և մագիստրոսական թեզերը միշտ պետք է լինեն ուշադրության կենտրոնում: Դրված լինի աշխատանքի խնդիրը և գիտական արժեքը:

2.Նիստի նախագահ- Այժմ անցնենք օրակարգի երկրորդ հարցին՝ Անալիտիկ և անօրգանական քիմիայի ամբիոնի վարիչի հաշվետվությունը կատարած աշխատանքների վերաբերյալ: Միայն առանձնացրեք ամբիոնի աշխատանքները, «Էկոլոգիական անվտանգություն» կենտրոնի և բազային լաբորատորիայի աշխատանքները:

Անալիտիկ և անօրգանական քիմիայի ամբիոնի վարիչի հաշվետվությունը կցվում է:

Պրոֆեսոր Տ.Վ.Ղուչիկյան - երկու տարի է կուրսային աշխատանքները փոխարինվել են «Հետազոտական բաղադրիչ ունեցող առարկաների աշխատանքներով»: Բաղադրիչ բառը հուշում է, որ առարկան պետք է անպայման ունենա հետազոտական մաս: Այս տարբերակ ավելի ճիշտ է քանզի ուսանողը սկսում է ինքնուրույն աշխատել: Այս տարի մեր երկու ամբիոնում կար նման աշխատանքներ՝ Ֆիզիկական և կոլոիդ քիմիայի ամբիոնում և անալիտիկ և անօրգանական քիմիայի ամբիոնում: Ներկայացրեք ամբիոնում կատարված աշխատանքների արդյունքները:

Պրոֆեսոր Շ.Ա.Մարգարյան - «Հետազոտական բաղադրիչ ունեցող առարկաների աշխատանքները կատարվել են դոցենտներ Հ.Ղազոյանի և Հ.Սարգսյանի ղեկավարությամբ: Աշխատանքները կատարվել են կոլոիդ քիմիայի բնագավառում՝ ՄԱՆ-րի գործունեությունը և կրիտիկական կոնցենտրացիայի որոշումը: Աշխատանքները կատարվել են թիմային յուրաքանչյուր թիմում 3 ուսանող: Աշխատանքների ավարտի տեղի է ունեցել ցուցադրական պաշտպանություն: - Ա.Ս.Գալստյան,- ինչ տարբերակով է կատարվել գնահատումը խմբակային, թե դիֆերենցված:

-Շ.Ա.Մարգարյան,- գնահատումը տեղի է ունեցել դիֆերենցված տարբերակով, այն է գնահատվել է յուրաքանչյուր ուսանողի աշխատանքի չափաբաժինը, ներկայացնելու

և աշխատանքին տիրապետելու ունակությունը: Այդ աշխատանքին մասնակցել է նաև գիտխորհրդի կազմից Միքայել Չոբանյանը:

Ուսանող Մ. Չոբանյան,- գնահատումը եղել է դիֆերենցված: Աշխատանքի ընթացքում թիմից յուրաքանչյուրիս առաջարկված է եղել որոշակի չափաբաժին: Մենք պատասխանատու ենք եղել այդ բաժնի և կատարման համար, և ներկայացման համար՝ տեսասահիկի պատրաստում և մեկնաբանություն:

Դոցենտ Ա.Ի.Մարտիրյան – Մեր ամբիոնում արդեն երկրորդ տարին է, որ կատարվում է նմանատիպ աշխատանքներ: Աշխատանքների արդյունքները ներկայացվել են ցուցադրական պաշտպանության և ուսանողները գնահատվել կատարած աշխատանքների չափաբաժնով:

Նիստի նախագահ Տ.Վ.Ղուչիկյան - «Դասախոսը ուսանողի աչքերով» սոցիոլոգիական հարցումների արդյունքները ուղարկված են ամբիոնի վարիչներին, ինչպես կարող էք նայել սուպերվիժն հարթակում: Նախ հարցումների մասնակցել են յուրաքանչյուր կուրսից սակավ թվով ուսանողներ, երկրորդ հարցումը կատարվում է 4 տարբեր ուղղություններով, հարցեր են եղել, որոնք կամ ուսանողները չեն հասկացել կամ պարզապես չեն մասնակցել հարցմանը:

Ընթացիկ հարցերում երկու կարևոր կետ կա 1. Մեծ է անբավարար ստացով ուսանողների թիվը: Երբ կուրսը ուներ կուրատոր, այս հարցերով զբաղվում էր կուրատորը, կուրսի բարձր առաջադիմությամբ ուսանողները օգնում էին անբավարար ստացողներին: Այս հարցը ներկայումս դրված է ծրագրի ղեկավարների վրա, հետևաբար ծրագրի ղեկավարները պետք է ուշադիր լինեն:

2. Այս տարի ուսանողները 26-ից 18-ը դիմում են ներկայացրել ռեկտորատ ցանկություն հատնելով ավարտական աշխատանքները կատարել անալիտիկ և անօրգանական քիմիայի ամբիոնում: Նման մոտեցման արդյունքում տեղի է ունենալու ուսումնական ծանրաբեռնվածության բևեռացում: Ֆակուլտետը ուներ ներքին պայմանավորվածություն, որ ուսանողները հավասարաչափ պետք է բաշխվեն ամբիոններում: Նման կարծիք է հայտնել նաև ուսումնական վարչության պետը, ով կարգավորում և վերահսկում է ուսումնական ծանրաբեռնվածությունները: Այդ ուսանողը կարող է ընտրել իր ցանկացած ամբիոնը, սակայն ամբիոնն էլ պետք է հաշվի առնի իր հնարավորությունների սահմանը:

Հաշվետվություն
Անօրգանական և անալիտիկ քիմիայի ամբիոն
2021/2022 ուս. տարի

Համաձայն 2021/2022 ուս. տարվա հաստատված աշխատանքային պլանի՝ նշված ժամանակաշրջանում անց է կացվել թվով 9 ամբիոնի նիստ: Ամբիոնում իրականացվում են ուսումնա-մանկավարժական և գիտական հետևյալ աշխատանքները.

Ուսումնա-մանկավարժական աշխատանքներ

Ամբիոնի դասախոսների կողմից անց են կացվում անօրգանական և անալիտիկ քիմիայի ընդհանուր դասընթացներ, ինչպես նաև համապատասխան մասնագիտական դասընթացներ՝ մագիստրատուրայում:

Ամբիոնում իրականացվում են մագիստրոսական թեզեր և ավարտական աշխատանքներ. պաշտպանվել է թվով 5 ավարտական աշխատանք (քիմիա- 2, սննդի անվտանգություն-3) և 5 մագիստրոսական թեզ (քիմիա-1, սննդի անվտանգություն-4): Բացի դրանից, ամբիոնում կատարվել է մանկավարժության 6 կուրսային աշխատանք:

Ամբիոնը ակտիվորեն մասնակցում է նաև ԵՊՀ մինչբուհական կրթության վարչության կողմից կազմակերպվող քիմիական գիտելիքների տարածմանը դպրոցականների շրջանում, ինչպես նաև օլիմպիադաների կազմակերպմանը:

Ամբիոնը համագործակցում է տարբեր արտադրական ձեռնարկությունների հետ՝ “Սննդի քիմիա” մասնագիտացմամբ ուսանողների պրակտիկ ուսուցումը իրականացնելու նպատակով:

Ամբիոնում իրականացվել են դասալսումներ ինչպես առաջին, այնպես և երկրորդ կիսամյակներում:

Գիտական աշխատանքներ

Ամբիոնի գիտական հետազոտությունների հիմնական ուղղություններն են. անօրգանական քիմիա, կոմպլեքս միացությունների ուսումնասիրում, ՄԱՆ-երի ջրային համակարգերի ուսումնասիրություն, տարբեր միացությունների հակաօքսիդային հատկությունների ուսումնասիրություններ:

Ամբիոնի համագործակցությունը այլ կրթագիտական կենտրոնների հետ

Հաշվետու շրջանում ամբիոնը սերտ համագործակցել է ֆակուլտետի ամբիոնների և գիտական լաբորատորիաների, Լեռնամետալուրգիայի, Անօրգանական քիմիայի և Քիմիական ֆիզիկայի ինստիտուտների հետ:

Մասնակցությունը գիտաժողովներին՝ 15

Հրատարակումները

2021-2022 ուս. տարում հրատարակվել է **16 գիտական հոդված:**

2021-2022 ուս. տարում «Անօրգանական քիմիա» գ/հ լաբորատորիայում հրատարակվել է **4 գիտական հոդված:**

2021-2022 ուս. տարում **Էկոլոգիական անվտանգության կենտրոնում** հրատարակվել է **5 գիտական հոդված:**

Սույն հաշվետվությունը քննարկվել է 2022թ. մայիսի 18-ին կայացած ամբիոնի նիստում:

ամբիոնի վարիչ՝
Մայիսի 27, 2022

Ա.Ի. Մարտիրյան